



Պայքարիք քո կյանքի համար

Կենտրոնացում Մարմնի կիրքը մի մեծ դուռ է, որով սատանան մտնում է մեր կյանք: Եթե մենք բաց թողնենք այս դուռը, մենք մեր կյանքով կվճարենք դրա համար:

Զվարճություն Որտե՞ղ ես դու ծնվել: Հաշվիր, թե քանի երկրների կամ մարզերի ներկայացուցիչներ կան խմբում:

Ուսումնասիրություն Բանալի համար՝ Առակաց 7-րդ գլուխ:

Սողոմոն թագավորն Առակաց 7-րդ գլխում գրել է մարմնի կրքերի մասին: Երբ մենք գտնվում ենք կրքի ոգու կապանքի մեջ, այն միշտ տանում է մահվան: Ահա երեք բան, որ մենք պետք է իմանանք մարմնի կրքերի մասին.

- *Ցանկություն:* (Առակ. 10.24, Փիլիպ. 1.23, Ղուկ. 22.15, Տիտ. 2.12, Բ Տիմ. 2.22, Եփ. 4.22, Գաղ. 5.16–17, Հռոմ. 6.19, 8.5–6, 13.14):
Աստված տալիս է մեզ լավ ցանկություններ, սակայն սատանան դրանք խեղաթուրում և վերածում է կրքի: Նորմալ է, եթե մենք առողջ սեռական ցանկություններ ենք ունենում Աստծո նախատեսած ամուսնության շրջանակներում:
- *Խարեություն:* (Առակ. 6.23–33, Առակ. 27.20, Եզեկ. 16.28): Մարդիկ շնություն գործում են, երբ բավարարված չեն լինում իրենց կյանքի համար Աստծո նախատեսածով: Կիրքը երբեք չի հազե՛նում: Այն ընդամենը պատճառ է դառնում, որ ավելի շատ փափագենք:
- *Մահ:* (Հակ. 1.14–15, Առակ. 7.23,27, Հռոմ. 8.12–13):
Մերը միշտ կյանք է բերում, իսկ կիրքը միշտ մահ է բերում: Վերջնական արդյունքում այն տանում է ֆիզիկական մահվան, սակայն նաև ամուսնության, ընտանիքի և բիզնեսի մահվան:

Ազատագրումն ու աշակերտությունը լուծումներ են կրքի ոգու կապանքի համար (Բ Կորն. 10.3-4, Փիլիպ. 4.8, Ա Կորն. 6.15-18, Ա Թեսաղ. 4.3-5, Ա Պետ. 2.11): Մենք ազատագրման կարիք ունենք, քանի որ կա ոգի, որ մեզ կապանքի մեջ է պահում: Մենք աշակերտության կարիք ունենք, որպեսզի կարողանանք զսպել մեր մարմինը:

Քննարկում

1. Ի՞նչն էր քեզ համար ամենաօգտակարն Առակաց 7-րդ գլխից:
2. Կարդա Առակաց 10.24-ը և Ղուկաս 22.15-ը: Հետո կարդա Տիտոս 2.12 և ԲՏիմոթեոս 2.22-ը: Ինչպե՞ս մենք կարող ենք զանազանել առողջ և Աստծուց տրված ցանկությունն ու կիրքը, որը խեղաթյուրված ցանկությունն է:
3. Գրեթե բոլորս էլ մտքի ձևով փորձություններ ունեցել ենք, որպեսզի չբավարարվենք Աստծո տվածից մեր կյանքի մեկ կամ մի քանի ասպարեզներում՝ ամուսնություն, ֆինանսներ, աշխատանք, ընկերություն և այլն: Ինչպե՞ս դու սովորեցիր գերի վերցնել այդ մտքերը և որոշել, որպեսզի բավարարվես:
4. Կարդա Հռոմեացիների 8.13-ը: Ո՞րն է մարմնի կիրքը հաղթահարելու բանալին: Ինչպե՞ս է Սուրբ Հոգին մեզ օգնում:
5. Խոսքի մեջ նշեց աշակերտության երեք քայլ, որոնցով մենք կարող ենք ենթարկեցնել մեր միտքը՝ համարներ անգիր անել, գերի վերցնել մեր մտքերը և մտածել լավ բաների վրա: Սրանցից ո՞ր մեկի մեջ դու կուզենայիր աճել: Մի քանի կարծիք հայտնիր, թե ինչպես դու կարող ես դա անել:

Տուն տար

Ամփոփելով, հիշիր հետևյալը.

- Աստված մեզ լավ ցանկություններ է տալիս:
- Կիրքը մեզ խաբում է՝ մտածելու, որ մենք, դա անելով, կբավարարվենք, սակայն այն երբեք բավարարվածություն չի բերում:
- Մարմնի կրքին զիջելը տանում է մահվան:
- Աստված չի դատապարտում մեզ, այլ հույս է տալիս: Նա մեզ կազատի մարմնի կրքից և կսովորեցնի այլ կերպ մտածել:

Աղոթիր

Աղոթիր խմբի անդամների կարիքների համար: